ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲԸԱՀԾՁԲ-4-2

ք. Երևան /19.01.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և "Ռոսգոսստրախ-Արմենիա" ԱՓԲԸ -ն ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել սույն պայմանագրի հավելված N1-ով և հավելված N2-ով նախատեսված պատահարներից ապահովագրման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայության արդյունքը և վճարել դրա համար:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներին համապատասխան:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին և N 2 հավելվածում նշված գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարողի մասնակցությամբ քննարկել, զննել և ընդունել սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարներն, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը և վճարելու վճարման ենթակա գումարները:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել փոխհատուցել իրեն պատճառված վնասները և վճարելու սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժն, եթե Պատվիրատուն բազմիցս խախտել է ծառայության համար վճարման պայմանները:

2.4 Կատարողն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուին կամ Ստացողին է ներկայացնում մատուցված Ծառայության (Ծառայության առանձին փուլի) մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն (Ստացողը) հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայության արդյունքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.Պայմանագրի գինը

4.1 Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 2-ում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 80024939 (ութսուն միլիոն քսանչորս հազար ինը հարյուր երեսունինը) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման որակի, օգտագործված նյութերի որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցած Ծառայության գնի 0,05 (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2017թ-ի հունվարի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգտուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև՝ 30 օրացուցային օրով:

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով

ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3, N4 և N4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ**
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Հյուսիսային պողոտա
ՀՀ ֆինանսների նախարարության	1, 4-րդ հարկ
աշխատակազմի գործառնական վարչություն	"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/հ 1570003731650100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02589581
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1

N ԲԸԱՀԾՁԲ-4-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ավտոմեքենայի մակնիշը	Շարժիչի հզորությունը (ձ/ուժ)
Թեթև մարդատար		
1	ՈՒԱԶ, ՎԱԶ, Շեվրոլե-Նիվա 21230	մինչև 80
2	ԳԱԶ, ՈՒԱԶ, Աուդի, ՎԱԶ, Սուզուկի Գրանդ Վիտարա, Տոյոտա Հայլուքս, Միցուբիշի-L200, Ֆորդ-Մոնդեո, ZHANQI BJ-2024, Հոնդայի Էլանտրա, Հյոնդայի-Տուսան	81-140
3	ԳԱԶ, ՍԵՕՍՏ-4, Ռենջ Ռովեր 2.7 TD, Տոյոտա Հիաս 2.7 GAS, Տոյոտա Լենդ Կրաուզեր Պրադո 2.7, Տոյոտա ՌԱՎ-4, Տոյոտա Hilux, Տոյոտա Քեմրի, Կիա Սերատո, Մերսեդես Բենց C200, Միցուբիշի Պաջերո, Միցուբիշի Օուտլենդեր, Նիսսան X TRALL, Տոյոտա-Կորոլա, Ֆորդ-Էքսպլորեր, Նիսան-նավարա, Կիա-Սորենտո	141-230
4	ԲՄՎ-733LI, Լեքսուս GX-470, Լեքսուս LX-470, Լեքսուս LX-570, Տոյոտա Լենդ Կրաուզեր Պրադո, Տոյոտա Լենդ Կրուզեր 200, Միցուբիշի Պաջերո, Նիսան-Պատրոլ, Նիսսան X Տերրա	231 - ավելի
Բեռնատար (նեռարյալ ուղևորաբեռնատար)		
1	ՈՒԱԶ	մինչև 80
2	ՈՒԱԶ, ԳԱԶ-66, ԳԱԶ-3308, 33081	81-140
3	ԶԻԼ, ՈՒրալ, ԿամԱԶ, ՄԱԶ	141-230
4	ԿրԱԶ, ՈՒրալ, ԿամԱԶ, Կ-700, 701 Հինո-700	231 - ավելի
Ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս), տրոլեյբուս		
1	ՈՒԱԶ, ԳԱԶ, Հյունդայի Բուս, Տոյոտա Հիաս, Միցուբիշի Պրիստիժ	Մինչև 17-ը նեռարյալ նստատեղ ունեցող (առանց վարորդի նստատեղի)
2	ՊԱԶ, ԼԱԶ, ԿԱՎԶ, Իկարուս, Նեման	17-ից ավել նեռարյալ նստատեղ ունեցող (առանց վարորդի նստատեղի)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
ք. Երևան, Հյուսիսային պողոտա
1, 4-րդ հարկ
"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581

Տնօրեն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

AM0667882

Հավելված N 2

N ԲԸԱՀԾՁԲ-4-2 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ավտոմեքենայի մակնիշը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	ԱՏ քանակը	Գումարը (ՀՀ դրամ)	Ծառայության մատուցումը
	1 տարով ապահովագրում				
	Թեթև մարդատար				
1	ՈՒԱԶ, ՎԱԶ, Շեվրոլե-Նիվա 21230	25,655.4	316	8,107,113	
2	ԳԱԶ, ՈՒԱԶ, Առդի, ՎԱԶ, Սուզուկի Գրանդ Վիտարա, Տոյոտա Հայլուքս, Միցուբիշի-L200, Ֆորդ-Մոնդեո, ZHANQI BJ-2024, Հոնդայի Էլանտրա, Հյոնդայի-Տուսան	32,069.0	308	9,877,264	
3	ԳԱԶ, ՍԵՕՄՏ-4, Ռենջ Ռովեր 2.7 TD, Տոյոտա Հիաս 2.7 GAS, Տոյոտա Լենդ Կրաուզեր Պրադո 2.7, Տոյոտա ՌԱՎ-4, Տոյոտա Hilux, Տոյոտա Քեմրի, Կիա Սերատո, Մերսեդես Բենց C200, Միցուբիշի Պաջերո, Միցուբիշի Օուտլենդեր, Նիսսան X TRALL, Տոյոտա-Կորոլա, Ֆորդ-Էքսպլորեր, Նիսսան-նավարա, Կիա-Սորենտո	44,255.2	111	4,912,327	
4	ԲՄՎ-733LI, Լեքսուս GX-470, Լեքսուս LX-470, Լեքսուս LX-570, Տոյոտա Լենդ Կրաուզեր Պրադո, Տոյոտա Լենդ Կրուզեր 200, Միցուբիշի Պաջերո, Նիսսան-Պատրոլ, Նիսսան X Տերրա	52,593.0	71	3,734,103	2017թ հունվար
Ընդամենը			**806**	**26,630,807**	
	Բեռնատար (նեռարյալ ուղևորաբեռնատար)				
1	ՈՒԱԶ	29,516.0	123	3,630,468	
2	ՈՒԱԶ, ԳԱԶ-66, ԳԱԶ-3308, 33081	36,895.0	255	9,408,225	
3	ԶԻԼ, ՈՒրալ, ԿամԱԶ, ՄԱԶ	40,215.1	677	27,225,609	
4	ԿրԱԶ, ՈՒրալ, ԿամԱԶ, Կ-700, 701 Հինո-700	40,584.5	178	7,224,041	
Ընդամենը			**1233**	**47,488,343**	
	Ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս), տրոլեյբուս				
1	ՈՒԱԶ, ԳԱԶ, Հյունդայի Բուս, Տոյոտա Հիաս, Միցուբիշի Պրիստիժ	44,834.2	20	896,685	
2	ՊԱԶ, ԼԱԶ, ԿաՎԶ, Իկարուս, Նեման	35,275.4	142	5,009,104	
Ընդամենը			**162**	**5,905,789**	
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**2201**	**80,024,939**	

2017թ-ի պլանով նախատեսված է **1 տարով ապահովագրել**՝ թեթև մարդատար, բեռնատար (նեռարյալ ուղևորաբեռնատար), ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս), տրոլեբուս-**2201** միավոր 80024939 (ութսուն միլիոն քսանչորս հազար ինը հարյուր երեսունինը) ՀՀ դրամ գումարի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ք. Երևան, Բագրևանդի 5

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011144079

ՀՎՀՀ 00867415

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ

ք. Երևան, Հյուսիսային պողոտա

1, 4-րդ հարկ

"Ամերիաբանկ" ՓԲԸ

Հ/հ 1570003731650100

ՀՎՀՀ 02589581

Տնօրեն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3

N ԲՇԱՀՇՁԲ-4-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Պատահարներից ապահովագրման ծառայություն (Դժբախտ պատահարներից ապահովագրման ծառայություններ)

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	CPV-ի կոդը՝	Չափի միավորը	Քանակ	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2017թ											
					հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Պատահարներից ապահովագրման ծառայություն (Դժբախտ պատահարներից ապահովագրման ծառայություններ) 1 տարով	66511110/1/1/1	դրամ	1	80024939	80024939	80024939	80024939	80024939	80024939	80024939	80024939	80024939	80024939	80024939	80024939

*** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
ք. Երևան, Հյուսիսային պողոտա
1, 4-րդ հարկ
"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581

Տնօրեն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

AM0667822

Հավելված 4

N ԲԸԱՀՇՁԲ-4-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
N ԲԸԱՀԾՁԲ-4-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N
Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————(Պատվիրատուի անունը)——————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ——————(Կատարողի անունը)——————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ——————— գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ——— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն